ՏԱՆՅԱ ԹԱՆԴԻԼՅԱՆ ՄԵՆՔ ԳՆՈՒՄ ԷԻՆՔ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՎ

1993-ի ապրիլին բարձրանում էինք Շուշի՝ ոտքով: Դա ուխտագնացություն էր: Շուշանիկը, Գրետը, ես, Լիզան, այժմ արդեն վաղամեռիկ գերմանահայ գիտնական Արա Բերքյանը՝ Լիզայի ամուսինը, կինոօպերատորներ, ռեժիսորներ, նկարիչներ, չեմ հիշում էլ ով: Գնում էինք ծնրադնելու, օրհնելու Աստծուն ու խնկարկելու ընկածներին, որոնք ասես մեզ հետ էին մեր յուրաքանչյուր քայլի հետ: Գնում էինք, իսկ մեզ ընդառաջ էր գալիս ջահելների մի ստվար խումբ՝ ճերմակ վերնաշապիկներով ու սև տաբատներով տղա-աղջիկների: Ձեռքներին՝ ծաղիկներ ու դեմքներին՝ ժպիտ: Շուշանը «դարաբաղերեն» հարցրեց «հրնչտե՞ղան եք կյամ», ասացին՝ Շուշիից: «Շուշիից գալը» այսպես բերև-անհոգ, այսպես ճերմակ-ճախրան, այսպես հանգիստ-աներկյուղ մեզ հեքիաթ թվաց: Նայեցի Գրետին՝ հավատա՞նք: -Իհարկե, - գլխով արեց նա: - Սրանից էլ լավ իրականությո՞ւն: Չկա կրակոց, չկա մահ, չկա գնդակի սուլոց»:

Չկար Շուշիում, իսկ ընդհանրապես՝ կար, շարունակվում էր: Դրանից առաջ մենք գնացել էինք «թեժ կետ» ու գործը վերջացնելուց հետո ետ էինք գալիս Վազգենի մեքենայով, որովհետև Վազգենն անձամբ ոչ մի ցանկություն չդրսևորեց մեզ համար «քոյից» դուրս գալ, նրան ստիպեց հրամանատարը: Թեև, եթե արդար դատենք, այդ սրահին՝ ոչ մի «քոյ» էլ չկար, ամեն ինչ այնքան խաղաղ-առօրեական էր, որ չէիր հավատում, թե դա ընդամենը ժամեր տևող խաղաղություն է: Մինչև մենք կտեղավորվեինք մերենայում, Վազգենն ուր-որ անհետացավ, հետո երևաց մի տղայի հետ (Էդոյի), ու երկուսն էլ լավ խմած-կարմրած, լավ էին: Արմանք-զարմանք բան էր՝ որտեղից գտան, ոնց հասցողացրին, ոնց «ձեի մեջ» մտան: - Վազգեն, - ասացի, - ամոթ չի՞, նիմի գնանք գրենք, որ Արցախի ճակատում կռվող զինվորները խմում-հարբո՞ւմ են: -Վազգենը, - մատը բազմանշանակ վերև տնկեց, - ոչ թե զինվորները, այլ Վազգենը, զինվորների հետ գործ չունենք: - Բայց ինչո՞ւ, - ասացի, - մենք քեզ ի՞նչ վատություն ենք արել, որ ուզում ես էդ հայով մեզ քաղաք տանել: - Ես չէ, է՛, էդ դուք եք ինձ վատություն արել: - Ինչո՞ւ, այ տղա, մեր էդ ո՞ր մի վատությունն է քեզ հասել: - Ճամփին կասեմ:

Ու ասաց: Էդոյին ալարկի նման քաշեց «նիվայի» մի անկյունը, ջղայնացավ՝ էշի մեկը, էշ, չափիդ չափով խմի, էլի, հետո դարձավ մեզ՝ ա շատ չեք վախենում խմած լինելուցս: Ծիծաղեցինք՝ բարով-խերով որ տեղ հասնենք, կասենք: - Մի վախեցեք, ասաց, - Վազգենը սրանից տասն անգամ շատ էլ որ խմած լինի, ձեր գլուխը չի ուտի: Ջղայնանալուս համարէլ կներեք, դուք չեք հասկանում՝ տղաներից ամեն, ամեն մեկն էլ կուզենար ձեզ քաղաք տանել (գոնե մի քանի ժամ ականջները կհանգստանան), իսկ ավտոմեքենա, բայց ստանի՝ բան, էստեղ մենակ ես ունեմ, հետո տանում եմ, որ իմ ալատերազմին ինքն էլ մասնակից դառնա ու թե խփվելու ենք, իրար հետ խփվենք: Հա, «կամանդիրի» աչքը մենակ ինձ է տեսնում՝ Վազգեն, տար, Վազգեն, բեր, Վազգեն, ուղեկցիր, Վազգեն, քաղաք գնա-արի: Շնորհակալ եմ, ախպեր: - Քեզ չեմ հասկանում, Վազգեն,- կտրեցի նրա խոսքը, - դա լավ չի՞: - Կներես, բայց ըստեղ են ասում՝ գելի գլխին ավետարան կարդացին... ի՞նչ է, ես վերին արտի ցորենն ե՞մ, որ հա՝ ես գնամ-գամ: Ինձ տանը սպասող չկա, ոչ կին ունեմ, ոչ երեխա, չնայած արդեն 30 տարեկան տղա եմ, իսկ նրանցից շատերը կին էլ ունեն, երեխա էլ (կիսաժպտաց), գնալը նրանց ավելի շատ է պետք, բան ինձ: Մի ուրիշ բան էլ կա՝ այս ալարկին մենք կանք, կենդանի ենք՝ ես, դու, էս ախմախը (Էդոյի մասին էր), մեր էս մեծ ախպերը (Գրետը), բայց հենց էս նույն ալարկին մերանցից ինչ-որ մեկը խփվում է, ինչ-որ մեկը մեռնում է, ինչ-որ մեկը չկա:

Նրա հարբածությունից հետք չէր մնացել, նա ասես ուրիշ մարդ լիներ, ուրիշ Վազգեն, ուրիշ հոգի, որ ճախրում է մեզ համար անտեսանելի-անհասանելի այլ մոլորակներում:

- Դե, կռիվ է, - բռնբռնացի, - այդ էլ կլինի, ոչ որ ապահովագրված չէ մահից:

- Բայց, ախր, էս կռիվը կարող էր չլինել, եթե մեր մեծերը արժանապատվություն ունենային...

Հենց այս մասին արդեն լսել էի (ու ոչ մեկ անգամ), դեռ երեկ իմ նորածանոթներից մեկը՝ Դահրավի կոլտնտեսության նախագահ Արմեն Ավանեսյանը, մեղավորության հնչերանգները ձայնի մեջ, տխուր ժպտալով «փիլիսոփայում էր» (իր՝ ասելով). «Մեր պապերը արյունով են հաստատել իրենց հողի վրա գոյություն ունենալու իրենց իրավունքը, մեր հայրերը «սիրալիր ժպիտով զինել են թշնամիներին (մեր «եղբայրը» թուրքերին) նրա մետրը մետրի ետևից, իսկ մենք... Մեզ վիճակված է շտկել մեր հայրերի՝ (շեշտեց) սխալը և ավարտել այն, ինչ չեն կարողացել ավարտել մեր պապերը: Իսկ Վովան՝ Շուշանիկի ազատամարտիկ ընկերը, ջահել-ծերացած Վովան, ուրիշ բառեր ասաց. «Եթե մեր հայրերը աղավնու խաղաղությամբ չքնեին իրենց կանանց կողքին, հիմի մենք կրակի բերանում չէինք լինի»: Նրանց առյուծ լինելն է պակասել: Մեր պապերը առյուծ են եղել, բայց թե ինչի են ալավնի ծնել, չեմ հասկանում: - Աղավնի լինելը վա՞տ է, Վովա: - Երև դու էլ ամեն անգամ ռումբը պայթելիս հաշվես կենդանի մնացած վայրկյանները, կհասկանա՝ աղավնի լինելն է լավ բան, թե առյուծ լինելը: Խոստովանում եմ՝ ես լավ չէի պատկերացնում նրա «կենդանաբանական» փիլիսոփայությունը, հիմի էլ, երևի, լավ չեմ պատկերացնում, բայց ինչ-որ բան, կա նրա մեջ՝ ճշմարիտ ինչ-որ բան:

...Մեքենան մի բանի անգամ կալք-կողքի արեց, սրբագսահեց, հետո դեմհար եղավ հողապատին ու կանգ առավ: Վազգենը հրամայեց. «Դուրս եկեք, նայելու բան կա»: Դուրս եկանք. մութ, բաց, անձրևաշաղախ գիշեր էր, բեկուզ սպանես, ոչինչ չէր երևում: Երկնքում՝ ոչ մի աստղ, լուսնի ու լույսի ոչ մի շող:

- Ա՛յ, էն բարձրում, էն լեռան վրա Գանձասարն է, - մատը մեկնեց Վազգենը (ես ուղղակի զգացի, որ մատը մեկնեց, չտեսա), - եղե՞լ եք Գանձասարում: - Ու չսպասելով մեր պատասխանին, վրա բերեց, - ով Գանձասարը չի տեսել, նա Արցախը չի տեսել, սուտ ա: Գանձասարը Արցախի գանձարն է, ում սիրի չսիրի, արցախցին Գանձասարը սիրելու ա մինչև մահը: Գնանք: Իսկ մեքենայում թեքվեց ինձ ու շշնջաց. «Կամանդիրը մի օրվա հանգիստ ա թույլ տվել: Էգուց կգամ քեզ ձեզ Գանձասար տանելու: Ուրիշի հետ որ գնար, էն չի լինի, ես Գանձասարի ամեն քարը գիտեմ, համբուրել եմ»:

Ու «էգուց» եկավ Վազգենը, և մենք գնացինք Գանձասար: